Վահե Ավետիսյան
ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ

ԱՆՏԻՈՔԸ ԿԻԼԻԿԻԱՅԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԼԵՎՈՆ II-Ի ՓՈՐՁԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Մերձավոր Արևելքում քրիստոնյաների միասնության գաղափարն առաջին պլան մղվեց 7-րդ դ. սկզբներում, երբ Երուսաղեմը գրավեցին նախ զրադաշտ պարսիկները, ապա արաբ մահմեդականները: Սակայն տարածաշրջանում քրիստոնեական արժեհամակարգը ոչնչացման վտանգի առաջ կանգնեց հատկապես սելջուկ-թուրքերի նվաճումներից հետո, որոնք ուղեկցվում էին այն աստիճան ավերածություններով, որ Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս Կոմնենոսը (1081-1118 թթ.), չնայած քրիստոնեական եկեղեցիների պառակտվածությանը, ստիպված էր օգնություն խնդրել Արևմուտքի քրիստոնյա «եղբայրներից»: Վերջիններս Կոստանդնուպոլսում վասալական երդում տվեցին Ալեքսիոսին, որը պետք է մարմնավորեր համաքրիստոնեական կայսեր կերպարը: Բայց Կիլիկիայի, Անտիոքի, Երուսաղեմի ետ նվաճումից հետո Արևմտյան ասպետները ձեռնամուխ եղան իրենց թագավորության ստեղծմանը, որն ուներ ընդգծված հակաբյուզանդական բնույթ: Արդյունքում Պաղեստինում և Սիրիայում քրիստոնյաների միասնությունը չկայացավ, այլ փոխարինվեց դրա մասնակի դրսևորմամբ՝ ֆրանկների և բյուզանդակենտրոն քաղաքականությունից խուսափող տեղական քրիստոնյաների (հիմնականում՝ հայերի) համագործակցությամբ: Այս համատեքստում հատկապես աշխուժացան Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի դքսության ռազմաքաղաքական հարաբերությունները: Երկու կողմերն էլ քաջ գիտակցում էին, որ գտնվելով Երուսաղեմն ու Կոստանդնուպոլիսը իրար միացնող ցամաքային և ծովային ճանապարհների կենտրոնում՝ միայն մեկ պետության մեջ միավորվելուց հետո հնարավոր կլինի մրցունակ ուժ դառնալ տարածաշրջանում:

Կիլիկիան և Անտիոքը միավորելու քաղաքականությունը սկսել էր դեռևս Բյուզանդիան: Մերձավոր Արևելքից նրա ետ քաշվելուց հետո դա փորձեցին իրականացնել նախ Անտիոքի խաչակիր դքսերը, ապա Կիլիկիայի հզորացած հայ իշխանները: Կիլիկիա-Անտիոքյան փոխհարաբերություններում իրադարձությունները հետաքրքիր ընթացք ստացան, երբ Կիլիկյան Հայաստանի իշխան դարձավ Լևոն Բ Մեծագործը (1187-1219 թթ.): Նա փորձեց իր տիրապետությանը միացնել Անտիոքի խաչակրաց դքսությունը՝ օգտվելով ստեղծված միջազգային նպաստավոր իրադրությունից և Անտիոքի թուլացումից: Այս ուղղությամբ առաջին քայլը եղավ Կիլիկիայի և Անտիոքի սահմանագլխին գտնվող, ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Պաղրաս ու Դարպսակ ամրոցների գրավումը: Դա հնարավոր եղավ 1187-89 թթ. ընթացքում սուլթան Սալահ ադ-Դինի՝ Անտիոքին հասցրած ծանր հարվածներից հետո միայն: Չունենալով Լևոնի դեմ պայքարելու անհրաժեշտ միջոցներ՝ Անտիոքի դուքս Բոհեմունդ 3-րդ Կակազը (1163-1201 թթ.) սկսում է խորհել դավադրության մասին[1]: Բայց Լևոնը վերջինիս կին Սիբիլլայից (որն իր կնոջ՝ Իզաբելլայի հորաքույրն էր) տեղեկանում է ծուղակի մասին և ձեռնարկում հակադարձ միջոցներ՝ 1193/4 թ. վերջին[1] Պաղրասում գերելով Բոհեմունդին[2]:

Հայոց արքունիքում փորձում են ստեղծված իրավիճակից քաղել առավելագույնը և ստիպել Անտիոքի դքսին գնալու լուրջ զիջումների: Հայերը Բոհեմունդից պահանջում են ետ վերադարձնել նախկինում Կիլիկիայից զավթած բերդերը, գանձերը և նույնիսկ հանձնել Անտիոքը[3]: Նա համաձայնվում է ընդունել այդ պայմանները, բայց Անտիոքի բնակիչները չցանկանալով իրենց դքսությունը տեսնել հայկական իշխանության կազմում՝ պատրիարք էմերի Լիմոժացու գլխավորությամբ դիմադրություն են կազմակերպում և վանում Անտիոք ուղարկված հայկական ուժերը[4]: Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպայնացին (1192-1197 թթ.), զգալով Կիլիկիայից եկող հնարավոր վտանգը, հանդես է գալիս միջնորդությամբ և իր վասալ դքսին ազատելու համար անձամբ է մեկնում Սիս՝ նախապես Անտիոքը պատրաստելով պաշտպանության[5]: Սա փաստում է, որ նա համոզված չէր, որ հարցը խաղաղ լուծում կունենա, բայց Լևոնը համաձայնվում է ազատ արձակել Բոհեմունդին՝ դրանից առաջ նրա հետ ստորագրելով ձեռնտու պայմանագիր, որն իրական հնարավորություններ էր ստեղծում հետագայում Անտիոքը Կիլիկիային միացնելու համար:

Ըստ այդ պայմանագրի Բոհեմունդը Կիլիկիային էր զիջում Պորտելայից մինչև Այաս ընկած տարածքները, իսկ ձեռքբերված «կեղծ հաշտությունը»[6] ամրագրվում էր նրա ավագ որդի ու գահաժառանգ Ռայմոնդի և Լևոնի զարմուհի Ալիսի (Ալիծ) ամուսնությամբ: Պայմանագրի համաձայն այս զույգն ապրելու էր հայոց արքունիքում, որից ծնված արու զավակը պետք է ժառանգեր և՛ Անտիոքը, և՛ Կիլիկիան[7]:

Սակայն պայմանագրի ուսումնասիրությունը և հատկապես դրան հաջորդած մի շարք իրադարձություններ ստիպում են կասկածել ավանդական պատմագրության մեջ ամրագրված այն նկարագրի իսկությանը, ըստ որի Ռայմոնդի հետ ամուսնանալուց հետո Ալիսը նրանից ունեցել է արու զավակ, իսկ Լևոնը փորձել է պաշտպանել մանկահասակ ժառանգի իրավունքները, որոնք խախտել էր նրա հորեղբայր Տրիպոլիի կոմս Բոհեմունդ Միականին: Նախ, պայմանագրին հետևած ամուսնության թվագրումը 1194/5 թ. խիստ պայմանական է[8], որն այս պարագայում կարևոր է ոչ

---

[1] Այն, որ սկզբնապես Բոհեմունդն է մտածել դավադրության մասին, հաստատում են նաև XII–XIII դդ. ֆրանկ հեղինակներ Էռնուլն ու Բեռնար Գանձապահը՝ թվագրելով իրադարձությունը 1194 թ. (այս հեղինակների տեքստերի պատկանելիության հարցն, այսպես կոչված, «Հերակլի պատմության» տարբեր

նմուշներում դրանց նմանությունների պատճառով մինչև այսօր բանավեճի առարկա է դարձել. տե՛ս **Горохов Ф.**, К вопросу о структуре «Хроники Эрнуля», «Античная древность и средние века», Ек., 2003, вып. 34, էջ 297-304): Տե՛ս Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, Par M. L. de Mas Latrie, Paris, 1871, էջ 318–322, Bernard le Trésorier, Continuation de Guillaume de Tyr, Par M. De Guizot, Paris, 1824, էջ 237:

[1] Հստակ թվագրել Բոհեմունդի գերության ժամանակը այսօր գրեթե անհնար է: Այդ մասին տե՛ս **Claude Cahen,** La Syrie du nord à l'epoque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, էջ 583:

[2] Տե՛ս **Սամուել քահանայի Անեցւոյ,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 144, Смбат Спарапет, Летопись, пер. Галстян А., Ер., 1974, էջ 112, Les Gestes des Chiprois, Recueil des historiens des croisades (այսուհետ՝ RHC), Doc. arméniens, t. 2, Paris, 1906, էջ 661-662, L'estoire de Eracles empereur, RHC, historiens occidentaux, T. 2, Paris, 1859, էջ 207-208:

[3] Տե՛ս La continuation de Guillaume de Tyr (1184-1197), Par Morgan M., Paris, 1982, էջ 166–167:

[4] Տե՛ս **René Grousset,** Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, Paris, 1936, էջ 130-132:

[5] Տե՛ս **Ришар Жан,** Латино-Иерусалимское королевство, СПб., 2002, էջ 235:

[6] Տե՛ս **Մուրադյան Կ.,** Կիլիկիան կայսրությունների խաչերուկներում, Ե., 2001, էջ 403:

[7] Տե՛ս **Սմբատ Սպարապետ,** Նշվ. աշխ., էջ 114, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), էջ 167-170, L'estoire de Eracles empereur, RHC, historiens occidentaux, t. 2, էջ 207-208:

[8] Մեզ հասած աղբյուրներում պայմանագիրը և դրան հետևած ամուսնությունը տատանվում է 1194-1195 թթ. միջև. Միքայել Ասորու մոտ այն թվագրվում է նույնիսկ 1193/4 թ. (De Michel le Sirien, Exrait de la chronique, RHC, Doc. arméniens, t. 2, էջ 404-405), Հերակլի պատմությունը՝ 1194 թ-ով (L'estoire de Eracles empereur, RHC, historiens occidentaux, t. 2, էջ 207-208), իսկ մի շարք աղբյուրներ էլ ոչ հստակ այն հիշատակում են 1194-1195 թթ. իրադարձությունների համատեքստում (Les Gestes des Chiprois, RHC, Doc. Arméniens, t. 2, էջ 661-662, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), էջ 170, Սմբատ Սպարապետ, Նշ. աշխ., էջ 113-

այնքան կոնկրետ պայմանագրի կնքման, որքան այդ պահին Ալիսի կարգավիճակը իմանալու առումով: Ապա անչափ հետաքրքիր է Լևոնի համոզվածությունը նորաթուխ զույգից ապագայում արու ժառանգ ծնվելու անխուսափելիության մեջ, քանի որ համաձայնագիրը որևէ այլ դեպք ուղղակի չէր քննարկում: Այստեղ որոշակի պարզաբանում կարող են մտցնել որոշ կարևոր տեղեկություններ, որոնք հաղորդում են ժամանակի անցուդարձերին ծանոթ մի շարք աղբյուրներ:

Մասնավորապես պարզվում է, որ Ալիսն հաշտության պահին հանդիսանում էր Հեթում Սասունցու այրին[1], որն, ի դեպ, սպանվել էր Լևոնի համար այդքան «հարմար» պահին՝ պայմանագրի նախաշեմին, և այդ գործում Սմբատն անուղղակի նշում է Լևոնի մասնակցության հնարավորությունը[2]: Մյուս կարևոր փաստը վերաբերում է Ռայմոնդի ճակատագրին: Հայտնի է, որ նա պայմանագրի կնքումից հետո որոշ ժամանակ ապրել է Լևոնի մոտ, ապա անհասկանալի հանգամանքներում մահացել է՝ թողնելով հղի կնոջը[3]: Մահվան պատճառների և ժամկետի մասին հստակ տեղեկությունների բացակայությունը ստիպում է մտածել նաև պալատական դավադրության մասին՝ կապված Ալիսի ու նրա որդու հետ[4]: Եթե հաշվի առնենք, որ Ալիսի և Ռայմոնդի ամուսնությունը տեղի է ունեցել 1194 թ. վերջին 1195 թ. սկզբին, իսկ Հեթում Սասունցին, ամենայն հավանականությամբ, մինչև 1194 թ. կեսերը ողջ է եղել, քանի որ նա Բոհեմունդի գերության ժամանակ նախ անհաջող արշավանք է գլխավորել Անտիոք[5], որից հետո վերադարձել է Կիլիկիա և սպանվել պայմանագրի կնքումից առաջ[6], ապա չի բացառվում, որ Ալիսի որդու հայրը լիներ նաև Հեթումը և դրդեր Լևոնին ուղղակի ազատվելու իր ծրագրերը խախտող Ռայմոնդից: Հնարավոր է նաև, որ Ռայմոնդի հետ ամուսնությունից առաջ Ալիսն արդեն ունեցել է արու զավակ, որին Ռայմոնդի սպանությունից հետո ներկայացրել են որպես Անտիոքի գահաժառագի օրինական որդի: Սրանով կարելի է բացատրել Լևոնի համոզվածությունը, որ ապագայում Ալիսը ունենալու է արու ժառանգ:

Այս վարկածի հիմնավորմանը մասամբ կարող է ծառայել այն փաստարկը, որ Ալիսի երեխան աղբյուրներում հիշատակվում է միայն Ռուբեն անունով[7], հաճախ

115, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorie, էջ 320-321): Այդ մասին մանրամասներ տե՛ս Claude Cahen, La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche, էջ 586:

[1] Տե՛ս La continuation de Guillaume de Tyr (1184-1197), էջ 167 և **Սմբատ Սպարապետ,** նշ. աշխ., էջ 113:

[2] Սմբատ Սպարապետն այս առիթով հաղորդում է, որ այդ ժամանակ բացի Հեթում Սասունցուց մահացել են նաև նրա եղբայր Շահնշահն ու այլ բարեկամներ, որոնց մահվան մեջ ըստ լուրերի մեղավոր էր Լևոնը: Լևոնի մասնակցությունը նրանց սպանության գործում դառնում է բավական հավանական, եթե հաշվի առնենք, որ վերջիններս ազգակցական կապեր ունեին Լևոնի հետ լրջորեն գժտված և ծերբակալված կաթողիկոս Տեր-Գրիգորի հետ: Տե՛ս Սմբատ Սպարապետ, նշ. աշխ., էջ 113, Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ-Բ, Ե., 2007, էջ 178-179:

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ,** նշ. աշխ., էջ 114-115:

[4] Սմբատի տեղեկությունից հետևում է, որ Ռայմոնդը մահացել է Լևոնի արքունիքում: Եթե նա մահացած լիներ ոչ կասկածելի մահով, ապա այդ մասին պատմագիրն, ամենայն հավանակությամբ, կտար որոշ մանրամասներ: Ավելին, այդ մասին տեղեկություններ կգտնեինք լատին աղբյուրներում: Ընդհանրապես, Ռայմոնդի կարգավիճակը Լևոնի մոտ գտվելու ժամանակ շատ անհասկանալի է և քիչ ուսումնասիրված: Պետք է կարծել, որ նա Սսում թողնվել է որպես պատանդ (գրավական) Բոհեմունդ III-ի կողմից պայմանագրիը չխախտելու դիմաց: Այդ մասին որոշ անդրադարձներ ունի Ալիշանը: Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան: Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ: Հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ Վ. Մ. Ալիշան Յուխտէն Մխիթարայ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 456, 490:

[5] Տե՛ս La continuation de Guillaume de Tyr (1184-1197), էջ 168:

[6] Տե՛ս **Սմբատ Սպարապետ,** նշվ. աշխ., էջ 113:

[7] Տե՛ս **Հեթում Պատմիչի** ազգաբանական աշխատությունները, Մանր ժամանակագրություններ (Մժ), հ. 2, կազմ. Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 95, 103, Հեթում Պատմիչի ժամանակագրություն, Մժ, հ. 2, էջ 63, **Ներսես Պալինեցի,** ժամանակագրություն, Մժ, հ. 2, էջ 180, **Վահրամայ Բաբունւոյ,** Ոտանաւոր պատ-

ուղղակի Ռուբենի թոռ Ռուբեն, իսկ Ռայմոնդի որդի Ռայմոնդ-Ռուբեն տարբերակի նշումը պաշտոնական հրովարտակներում հայտնվում է ավելի ուշ՝ 1210 թ. հետո[1] (մինչ այդ դրանցում ևս նա հիմնականում հիշատակվում է Ռուբեն անունով[2]), հավանաբար Անտիոքի դքսության օրինական ժառանգորդ Ռայմոնդի որդի ներկայացնելու նպատակով, որն ըստ ամենայնի նրա գործերը տնօրինող Լևոնի մտահղացումն է[3]:

Ամեն դեպքում նկատելի է, որ Ռայմոնդի սպանությունն ունեցել է քաղաքական ենթատեքստ, որում առավել շահագրգռված է եղել Լևոնը, քանի որ նրա գոյությունը ոչ մի կերպ չէր համապատասխանում իր իշխանության ներքո ապրող անչափահաս Ռայմոնդ-Ռուբենի միջոցով Անտիոքը Կիլիկիային միացնելու ծրագրին:

Կա դեպքերի զարգացման ևս մեկ տարբերակ. Ռուբենի հայրը եղել է հենց ինքը՝ Լևոն Բ-ն: Հայտնի է Լևոնի կնքահայր դառնալու և Ռուբենի նկատմամբ ունեցած նրա հայրական խնամքի մասին[4]: Պատահական չէ, որ որոշ հեղինակների կարծիքով Լևոնը նույնիսկ որդեգրել է Ռուբենին[5], իսկ միայն արու զավակ չունենալու պարագայով իր գահը ֆրանկյան ծագում ունեցող Ռայմոնդ-Ռուբենին հանձնելու Լևոնի ցանկությունը ավելի շատ հարցեր է առաջացնում, քան տալիս պատասխաններ:

Ռուբենի՝ Ռայմոնդի որդին չլինելու հանգամանքով կարող է պայմանավորված լինել նաև այն իրողությունը, որ Անտիոքի ժառանգության համար պայքարող Բոհեմունդ Միականին երբեք չփորձեց վիճարկել նրա հովանավորության հարցը: Վերջին հաշվով նա ևս կարող էր դառնալ մանկահասակ Ռուբենի խնամակալ և Անտիոքը կառավարել նրա անունից: Սակայն անաչառության համար պետք է նշել, որ մի քանի հանգամանք Լևոնի հովանավորությունը Ռուբենի նկատմամբ, այնուամենայնիվ, դարձնում են ավելի օրինական: Առաջին հերթին, Ռայմոնդի մահից հետո ողջ էր նրա կինը՝ Անտիոքի իշխանուհի և Լևոնի անմիջական հովանավոր Ալիսը: Բացի այդ, Ռայմունդ-Ռուբենը ծնվել էր Հայոց արքունիքում ու նրա կնքահայրը Լևոն Բ-ն էր, որը միջնադարում լրջագույն փաստարկ էր:

Լևոն Բ-ի ծրագրի կարևոր կողմերից մեկը դավանաբանական հարցն էր: Ե՛վ Անտիոքը, և՛ Կիլիկիան քրիստոնեական երկրներ էին, բայց Անտիոքի բարոնները հռոմեական ուխտի անդամներ էին, իսկ Հայոց արքունիքում տիրապետում էր առաքելական ուսմունքը: Ուստի Լևոնը լավ հասկանալով Անտիոքի լատին բարոնների և եկեղեցու դիրքորոշման կարևորությունը և խուսափելու համար հետագայում խաչակրաց իշխանության միացման կապակցությամբ նրանց կողմից սպասվող հավանական անհամաձայնությունից՝ 1198 թ. հունվարի 6-ին Տարսոնում թագադրվելու ժամանակ թագն ընդունում է նաև «Աստծո, հռոմեական եկեղեցու և հռոմեական

մութիւն, RHC, Doc. armaniens, t. 1, Paris, 1869, էջ 512, 514, **Սմբատ Սպարապետ,** Նշվ. աշխ., էջ 114, 123, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorie, էջ 321, L'estoire de Eracles empereur, RHC, historiens occidentaux, t. 2, էջ 137, 213, 313, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), էջ 168, 169:

[1] Տե՛ս Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, pub. par. Langlois V., Venise, 1863, էջ 112-113,115, 129, 132-138:

[2] Տե՛ս Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, էջ 130-131:

[3] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը, հ-Բ, էջ 212-213:

[4] Տե՛ս **Սմբատ Սպարապետ,** նշ. աշխ., էջ 114, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները. «Հանդէս Ամսրօեայ», Վիեննա, 1965, № 7-9, էջ 384:

[5] Տե՛ս **Պալասանյան Ս.,** Պատմութիւն Հայոց. Սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, 1902, էջ 356, Օրմանյան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը, հ. Ա և Բ, Պէյրութ 1959, էջ 822, Հայոց պատմություն, խմբ. Ժամկոչյան Հ., Մելիք-Բախշյան Ս., հ. 1, Ե., 1975, էջ 523:

կայսեր անունից»[1], արտաքուստ դառնալով Լատինական Արևելքի մաս: Նա այդ դաշինքից առաջին հերթին ակնկալում էր շահել քաղաքական դիվիդենտներ, և դա նրան հաջողվեց, քանի որ ի դեմս Անտիոքի լատին պատրիարքների ձեռք բերեց հավատարիմ դաշնակիցներ: Սա պայմանավորված էր ոչ թե Լևոնի ու Ռուբենի «օրինական իրավունքները» պաշտպանելու կաթոլիկ եկեղեցու ցանկության հետ, այլ այն պայքարով, որ նրանք մղում էին Անտիոքի ազդեցիկ հույն համանքի դեմ[2], որը հույս ունենալով Բոհեմունդ Միականու միջոցով քաղաքում վերականգնել ուղղափառ պատրիարքին՝ 1201 թ. միացավ վերջինիս և քաղաքային կոմունայի հետ միասին նրան ճանաչեց իշխան՝ Բոհեմունդ 4-րդ անունով[3]: Սա այնքան սրեց նրա հարաբերությունները կաթոլիկ հոգևորականության հետ, որ պատրիարք Պետրոս Անգուլեմացին բացահայտ կերպով հանդես եկավ Լևոնի և Ռայմոնդ-Ռուբենի օգտին: Նրա կողմնակիցները 1207/08 թ. Անտիոքի դարպասները բացեցին հայերի առաջ, որոնք առանց մարտի գրավեցին քաղաքը: Պատրիարքը Ռայմոնդ-Ռուբենին հրռչակեց Անտիոքի պրինց, իսկ Ալիսը ճանաչվեց նրա խնամակալ: Այս հաղթանակից հետո Լևոն Բ-ի անունով հատվեց լատինագիր դրամ[4], ինչը վկայում էր, որ հայկական շրջաններում Ռայմոնդ-Ռուբենը դիտվում էր սոսկ որպես միջոց Կիլիկիային Անտիոքը միացնելու համար, քանի որ Լևոնը, որպես մանկահասակ պրինցի հովանավոր, հնարավորություն էր ստանում ղեկավարելու նաև դքսությունը: Սակայն այս հաջողությունը կարճ է տևում. Բոհեմունդը տաճարականների հետ հայերին հեռացնում է քաղաքից՝ հայցելով Հալեպի ամիրայի օգնությունը: Շրջափակման մեջ հայտնվելու վտանգը ստիպում է Լևոնին վերադառնալ Կիլիկիա[5]:

Դեպքերի նման զարգացումը ստիպում է Լևոն Բ-ին նոր մակարդակի վրա բարձրացնել Ռայմոնդ-Ռուբենի իրավունքները, որում նա ամեն կերպ փորձում էր ընդգծել սեփական գերակայությունն ու հայրական հոգածությունը նրա նկատմամբ, այսինքն ի ցույց դնել նրա օրինական, վասալական կախվածությունը իրենից: Այդ նպատակով նա 1209 թ. Ռայմոնդ-Ռուբենին հռչակում է իր թագաժառանգ, իսկ 1210 թ. Հռոմի պապի և Գերմանիայի կայսեր կողմից ստանում է նրա համար խնդրած թագը[6], ապա ամուսնացնում նրան Կիպրոսի թագավոր Ամորի 2-րդի (1195-1205 թթ.) դստեր՝ Հելվիսի (Էլուիզա) հետ: Սակայն սրանով Արևմուտքը ոչ թե շեշտում էր Լևոնի և Ռայմոնդ-Ռուբենի իրավունքների ավելի օրինական լինելը, այլ ընդամենը փորձում էր հավասարակշռել ու երկարաձգել կողմերից մեկի լիակատար հաղթանակը, որը հնարավորություն էր տալիս վերահսկելու և միջամտելու նրանց գործերին:

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, աշխարհաբ. թարգմ. Առաքելյան Վ., Ե. 1982, էջ 108, **Սամուել քահանայի Անեցւոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 144, **Վահրամ Ռաբունի**, նշ. աշխ., էջ 511-513, **Սմբատ Սպարապետ**, նշ. աշխ., էջ 115-117, **Микаелян Г.**, История Киликийского Армянского государство, Е., 1952, էջ 156:

[2] Անկախ այն բանից, որ Բյուզանդիան վաղուց արդեն քաշվել էր Անտիոքից և ուղղակի ազդեցություն չուներ քաղաքի ներքին զարգացումների վրա, այնուամենայնիվ, դատելով մեզ հասած տեղեկություններից, կարելի է պնդել, որ Անտիոքի հույն համայնքը 12-րդ դ. վերջին և 13-րդ դ. սկզբին պահպանել է որոշակի ազդեցություն ու ունեցել ամուր դիրքեր քաղաքում: Այդ մասին տե՛ս Усама ибн Мункиз, Книга назидания, М., 1958, էջ 217 նաև Claude Cahen, Le sceaude de Thierri de Barneville, duc d'Antioche, Revue numismatique, 6-e série, t. 26, Paris, 1984, էջ 227:

[3] Տե՛ս **Ռենե Գրուսե**, նշվ. աշխ., էջ 246:

[4] Տե՛ս **Ալիշան Ղ., Սիսուան:** Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, էջ 494, 497:

[5] Տե՛ս **Ռենե Գրուսե**, նշվ. աշխ., էջ 256:

[6] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, նշ. աշխ., էջ 121:

Հաշվի առնելով սա՝ 1216 թ. Լևոնը հերթական անգամ փորձում է իր ծրագիրը կյանքի կոչել ռազմական ճամապարհով և հարձակվում է Անտիոքի վրա: Սմբատը նշում է, որ նա չկարողանալով ուժով գավթել քաղաքը՝ նվերներով իր կողմն է գրավում մի քանի իշխանների, այդ թվում սենեշալ Աքարիային և պատրիարք Պետրոս Լաչեդոնացուն[1], որոնք գիշերով բացում են դարպասները և ներս թողնում հայերին: Ռայմոնդ-Ռուբենը նորից հռչակվում է պրինց, սակայն նստելով դքսության գահին՝ նա փորձում է ազատվել Լևոն Բ-ի հովանավորությունից, ինչը ստիպում է թագավորին չեղյալ հայտարարել նախկին որոշումը և զրկել Ռայմոնդ-Ռուբենին Հայոց գահաժառանգի իրավունքներից ու թագաժառանգ հռչակել իր դուստր Զաբելին[2]:

Այս իրադարձությունը պայմանականորեն կարելի է համարել Լևոնի ծրագրի ավարտ, քանի որ Ռայմոնդ-Ռուբենն արդեն չափահաս էր և նրա անունից Անտիոքը կառավարելու ոչ մի օրինական հիմք ինքն այլևս չուներ, իսկ նրան ուղղակի սովորական կատարածու դարձնելու ջանքերը, ըստ էության, չարդարացան: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ Լևոնի հիմնական նպատակը ոչ թե Կիլիկիայի ու Անտիոքի միավորումն էր իրենից հետո, այլ Անտիոքն իրեն ենթարկելը ի դեմս Ռայմոնդ-Ռուբենի: Մյուս կողմից՝ հասկանալի էր, որ ամբողջ կյանքում որպես ապագա դուքս դաստիարակված անձը չէր կարող դառնալ Հայոց արժանի թագավոր, առավել ևս, որ նա երբեք չէր փայլել իր տաղանդով: Ասվածի ապացույցը նրա ապաշնորհ կառավարումն էր Անտիոքում[3], որի հետևանքով 1219 թ. վերջնականապես տապալվում է Բոհեմունդ IV-ի ասպետ Վիլիամ Ֆարաբելի բարձրացված ապստամբության արդյունքում ու փախչում է Կիլիկիա[4]:

Քաղաքական տեսանկյունից Անտիոքը Կիլիկիային միավորելու Լևոն Բ Մեծագործի ծրագիրն առավել իրատեսական էր այն բազմաթիվ փորձերի մեջ, որոնք եղան և՛ դրանից առաջ, և՛ հետո, քանի որ լուծում էր, «օրինականության» խնդիրը: Անտիոքի պարագայում դա բացատրվում է նրանով, որ զուտ ռազմական միջոցներով խաչակրաց այդ պետությունը վերացնելու դեպքում Հայոց թագավորությունը մյուս խաչակրաց միավորների կողմից կդիտվեր ոչ բարեկամական ու կդատապարտվեր մեկուսացման: Այդ պատճառով Լևոնը դաշինք կնքեց Հռոմի հետ, որը խաչակրաց պետություններում ուներ գլխավոր իրավարարի դեր: Վերջինս նկատի ունենալով իր ծավալապաշտական նկրտումները՝ բնավ չէր պատրաստվում միակողմանի օգնել կողմերից որևէ մեկին, այլ նրանց օգտագործում էր որպես խաղաքարտ: Կողմերի այս իրարամերժ քաղաքականությունն էլ ի վերջո հետին պլան մղեց միասնականության գաղափարը, որ թուլացրեց ու նոր մարտահրավերների առաջ անօգնական կանգնեցրեց ոչ միայն Անտիոքն ու Կիլիկիան, այլ ողջ քրիստոնեական աշխարհը Մերձավոր Արևելքում:

Ваге Аветисян, "Легитимная" сторона попытки Левона II-го объединения Антиохии и Киликии - Несмотря на то, что Киликийская Армения и Антиохийское княжество были политически раздельны, их всегда стремились объединить то армяне, то франки. Резкие политические пе-

[1] Տե՛ս Les Gestes des Chiprois, RHC, Doc. arméniens, t. 2, Paris, 1906, էջ 665:

[2] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, նշ. աշխ., էջ 122–123:

[3] Տե՛ս L'estoire de Eracles, RHC, Historiens occidentaux, t-2, էջ 318-319:

[4] Տե՛ս Les Gestes des Chiprois, RHC, Doc. arméniens, t. 2, էջ 665, 670:

ремены, произошедшие на Ближнем Востоке в конце XII в., оставили след и на судьбах этих двух государств. Завоевания Иерусалима в 1187г. Салах ад-Дином поставило в катастрофическое положение все христианские государства Ближнего Востока. Ведя умелую дипломатическую политику с Римским папой, царь Киликии Левон II (1187-1219гг.) сумел династическим браком с Антиохийским принцем Раймундом подготовить почву для объединения в будущем Антиохии в лице его сына Раймонда-Рубена, происхождение которого вызывает сомнения. Но его планы расстроил младший брат Раймунда Боэмунд IV-й, который выступил с неуступчивой позиции. Эта очередная попытка объединения Киликии и Антиохии отличается от предыдущих четко выстроенным политическим характером.

Vahe Avetisyan, "Legitimate" side of the attempt to create a unified Armenian state-of Antioch of Levon II - Despite Armenian kingdom of Cilicia and principality of Antioch were politically separate, they have always sought to unite the Armenians, the Franks. The sharp political changes which take place at the end of the XII century in the Near East leave its trace on the fate of those two countries. Conquest of Jerusalem in 1187 by Saladin put all the Christian states into a disastrous situation. Leading skilful diplomatic policy with the Pope, the king of Cilicia, Leo II (1187-1219) managed to prepare the "legitimate" ground for unification of Antioch in future by dynastic marriage with the Prince Raymond of Antioch, on the behalf of his son Raymond-Roupen, whose origin was suspicious. But his plans were upset by the youngest brother Raymond Bohemond IV, who took uncompromising position. This another attempt of unification of Cilicia and Antioch is different from the previous by its well-aligned political nature.